ժէ։ Սա զզօրսն Ալանաց եհար, զորդի արքային նոցա ըմբռնեաց, զդուստր արքային Էատ'ի կնութիւնն և մեծ հարստանիք արար։ Ապա և զեղբայր նորին ազատեաց և կացոյց թագաւոր Պարսից յաթոռի հօրն նորին. և երկու անգամ զզօրսն Հռոմայեցւոց յաղթեալ հալածեաց յԱսորեստանէ. և մահն և թագումն՝ որ մեծ և շքեղ և երևելի եղև. թագաւորեաց ամս ԽԱ։

Արտաւազդ՝ որդի Արտաշիսի յորս երեալ և խելագարեալ անկաւ յերիվարէն 'ի խոր մի և անհետ կորեաւ 'ի ձորն, զի ոչ գտին զդի նորին. թագաւորեալ ամս Բ։

Տիրան՝ որդի Արտաշիսի՝ ամս ԻԱ։ Սա մտերմութեամբ կացեալ ընդ Հռոմայեցիս, և խաղաղութեամբ թագաւորեաց։ Սա միայն որսոյ և զբօսանաց պարապեցաւ 'ի կեանս իւր։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան